**«Հետաքննող լրագրողներ»** հասարակական կազմակերպություն

Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219
E-mail:armenmirzoiian@gmail.com,  info@hetq.am, URL : www.hetq.am

---

23.08.2021թ

ՀՀ պաշտպանության նախարար
Արշակ Կարապետյանին

Հարգելի՛ պարոն Կարապետյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2021 թվականի հուլիսի 14-ին ՀՀ ՊՆ-ն տարածել էր հաղորդագրություն Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան ուղղությամբ տեղակայված ՀՀ ԶՈՒ N զորամասի զինծառայող Արթուր Նալբանդյանի և վարորդ Արամայիս Տոռոզյանի հետ կապի կորստի մասին: Ի՞նչ տեղեկատվություն ունի ՊՆ-ն զինծառայողների գտնվելու տեղի հետ կապված:
2. Արդյո՞ք հայ զինծառայողները գերեվարվել են Ադրբեջանի զինված ուժերի կողմից:
3. Եթե այո, ապա արդյո՞ք հայ զինծառայողների գերեվարման փաստը հաստատել է ադրբեջանական կողմը:
4. Եթե հայ զինծառայողները գերեվարվել են, ապա ինչ պայմաններում է տեղի ունեցել գերեվարումը:
5. Եթե հայ զինծառայողները գերեվարվել են, ապա արդյոք բանակցություններ են վարվում նրանց հետվերադարձի հետ կապված:
6. Արդյոք ՀՀ ՊՆ-ն տեղեկատվություն ունի նրանց առողջական վիճակի վերաբերյալ:
7. Տարածքային ո՞ր զինկոմիսարիատներում են գրանցված եղել այդ զինծառայողները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց

հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ

«Հետք» թերթի լրագրող Արմեն Միրզոյան